

20. Համերգային գործունեություն

2002թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործել են ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության համակարգի 17 և համայնքային ենթակայության 2 համերգային կազմակերպություններ: 2002թ. լուծարվել է 1 համերգային կազմակերպություն՝ Լոռու մարզային ֆիլիարմոնիան:

2002թ. հանրապետությունում կազմակերպվել է 396 համերգ կամ 17-ով պակաս, քան 2001թ.: Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 368, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ (պայմանագրային հիմունքներով)՝ 28 համերգ: Հանրապետությունում կայացած համերգներից 11-ը կամ 2.8%-ը կազմակերպվել են գյուղական համայնքներում, 281-ը կամ 71.0%-ը՝ ֆիլիարմոնիկ համերգներն են:

2002թ. արտասահմանում կազմակերպված 23 համերգ-հյուրախաղերից 5-ն իրականացվել են ԱՊՀ երկրներում, 1-ը՝ Եվրոպայում, 4-ը՝ ԱՄՆ-ում, 7-ը՝ Միացյալ Արաբական Եմիրություններում, 3-ական՝ Սիրիայում և Իրանում:

2002թ. կազմակերպվել է 54 բարեգործական համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 4.3 հազ. մարդ: Պետպատվերով կազմակերպվել է 167 համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 13.1 հազ. մարդ, ստացված հասույթը՝ 26.9 մլն. դրամ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա է եղել 84.2 հազ. հանդիսատես: Նրանց 1.3%-ը կամ 1.1 հազ. մարդ հաճախել են գյուղական համայնքներում կազմակերպված համերգներին, 62.8%-ը կամ 52.9 հազ. մարդ՝ ֆիլիարմոնիկ համերգներին: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 26:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 50.4 մլն. դրամ (2001թ.՝ 61.3 մլն. դրամ), որից 38.8 մլն. դրամը ստացվել է ֆիլիարմոնիկ համերգներից, իսկ 0.2 մլն. դրամը՝ գյուղական համայնքներում կազմակերպված համերգներից: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 127.3 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 18.2 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները կազմել են 247.0 մլն. դրամ, որի 72.9%-ը կամ 180.1 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 20.4%-ը (50.4 մլն. դրամ)՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 2.9%-ը (7.0 մլն. դրամ)՝ վարձակալությունից, 1.1%-ը (2.8 մլն. դրամ)՝ նվիրատվություններից, 2.7%-ը (6.7 մլն. դրամ)՝ այլ եկամուտներից:

Համերգային կազմակերպությունների տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 256.2 մլն. դրամ: Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումները կազմել են ընդհանուր ծախսերի 47.5%-ը կամ 121.7 մլն. դրամ, պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 21.5%-ը (55.1 մլն. դրամ), ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 13.6%-ը (34.9 մլն. դրամ), նյութական ծախսերը՝ 4.6%-ը (11.9 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 3.8%-ը (9.6 մլն. դրամ), հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերը՝ 1.1% (2.7 մլն. դրամ), այլ ծախսերը՝ 7.9%-ը (20.3 մլն. դրամ): Միջին հաշվով մեկ համերգի ֆինանսական ծախսերը 2002թ. կազմել են 647.0 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների գործունեությունն ըստ մարզերի, 2002թ.

	Համերգային կազմակերպությունների քանակը	Համերգների քանակը	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.Երևան	16	380	24	81.0	213	49885.7	131
Շիրակ	2	16	8	3.2	200	500.0	31
Ընդամենը ՀՀ	18	396	22	84.2	213	50385.7	127

Համերգային կազմակերպությունների գործունեությունը, 1996-2002թթ.

	Կազմակերպությունների քանակը	Համերգների քանակը	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
1996	16	487	30	149.4	307	33256.0	68.3
1997	20	510	26	870.7	1707	42601.7	83.5
1998	21	579	28	952.6	1645	47650.1	82.3
1999	20	565	28	505.9	895	35089.6	62.1
2000	20	410	21	139.9	341	26710.0	65.1
2001	19	413	22	168.2	407	61322.0	148.5
2002	18	396	22	84.2	213	50385.7	127.2